Ռաֆֆի

Անմեղ վաճառք

Ա

Ձմեռ էր:

Վաղորդյան արեգակը տխրությամբ սահում էր սև թուխպերի ետքում, երբեմն ամպերի ճեղքերից երկչոտ կերպով ցույց տալով յուր գունատ դեմքը, տարածում էր նա թույլ ճառագայթները նորեկ ձյունի վրա:

Օրը կյուրակի էր: Զանգակները դեռ նոր էին սկսել հրավիրել բարեպաշտ ժամասերներին դեպի աստուծո տունը: Մի տասներկու տարեկան տղա՝ ցրտից լրջացած դեմքով՝ միայնակ գնում էր նեղ մռայլոտ փողոցով: Մաշված հագուստը չէր պաշտպանում նրան բուքի սաստկությունից. նա յուր սառած մատները երբեմն տաքացնում էր բերնի շոգիով, երբեմն յուր ծոցն էր դնում: Ձյունը խշխշում էր նրա ոտքերի տակ, և պատառոտած կոշիկներից դուրս պրծած մատները, շատ անգամ հանդիպելով սրածայր սառույցի կտորներին, ծակծկվում էին, կտրատվում էին, և պատանին մոր մոքելով շարունակում էր յուր ճանապարհը:

Երկար այնպես դնում էր նա, մինչև հասավ մի հոյակապ տան, ուր նրան կից կառուցվում էր մի նոր շինվածք: Հողի, քարի, կրի, աղյուսների և փայտերի անպիտան կտորտանքը դիզված էին նրա մոտ մի անկյունում խառն ձիերի աղբի հետ, որ դուրս էին ածել մերձակա ախոռատնից: Քանի անգամ ոստիկանությունն ուշադրություն էր դարձրել այդ աղբանոցի վրա, բայց ոչ ոք չէր կամենում մաքրել նրան: Պատանին մոտ գնաց ամբարտակին և երկչոտ կերպով յուր շուրջը նայելով, երբ տեսավ ոչ ոք չէ երևում, վեր բարձրացավ նրա վրա: Նա

սկսավ յուր սառած մատներով փորել հողը, քրքրել աղյուսների բեկորները և նրանց միջից հավաքել փայտի կտորտանք: Մի ամբողջ ժամ տևեց այդ աշխատությունը, մինչև նա հավաքել էր բավականին փայտ: Նա յուր ժողոված պաշարը լցրուց կտավի շորի մեջ, շալակն առավ և կամենում էր հեռանար

Հանկարծ փողոցի քարուղին որոտաց: Փառավոր կառքը, դուրս գալով ախոռատնեն, կանգնեց հոյակապ տան դռանը: Դուրս եկավ մի կարճահասակ, հաստլիկ մարդ, փաթաթված բաբորի և սամույրի մեջ: Նա կամենում էր կառքը նստել, երբ աչքն ընկավ պատանու վրա:

Էդ ի՞նչ ես տանում, հարցրուց նա կոշտ կերպով:

Փայտի կտորտանք է, աղա՛. ա՛յ էնտեղից հավաքեցի, պատասխանեց պատանին՝ ցույց տալով աղբանոցի վրա:

Էնտեղից հավաքեցի՞ր, կոչեց մեծատունը բարկությամբ, և նույն րոպեին նրա դեմքն ընդունեց վայրենի կերպարանք դե՛, վեր դի՛ր, ասում եմ քեզ, անպիտան. դե՛, շուտ, թե չէ՛...

-Իմ տունը քանդեցին, եղած-չեղածս տարան, ուզում են ինձ էլ իրանց պես աղքատացնեն... ասում էր նա ինքն իրան զայրանալով:

Պատանին դողդողալով ցած դրեց շալակը, բայց չէր կամենում նրանից հեռանալ: Նա մի ողորմելի հայացք ձգեց մեծատան երեսին, աղաչելով.

-Ա՛ղա ջան, թող տանեմ, մերս հիվանդ է, վառելու ոչինչ չունենք:

-Դու համարձակվո՞ւմ ես պատասխանել, դու, լակո՛տ, զո՛ղ, ավազակ գոռաց մեծատունը: Մեխակ, ձայն ավեց նա դեպի ետ նայելով:

Իսկույն հայտնվեցավ մի բարձրահասակ իմերել ծառա, մեջքը սեղմած արծաթի քամարով:

-Ա՛ռ դրանից փայտերը, -հրամայեց ծառային:

Իմերելը մոտեցավ, կամենում էր խլել փայտերը: Խեղճ տղան. երկու ձեռքով պինդ բռնած յուր շալակից, չէր կամենում բաժանվել նրանից: Նա արտասուքն աչքերում աղաչում էր. Մերս հիվանդ է... թողե՛ք տանեմ...

Բայց իմերելի մի ապտակով տղան գետին գլորվեցավ, իսկ ծառան փայտերի հավաքածուն յուր տիրոջ խոհանոցը տարավ:

Բ

Կեսօր էր:

Թուխպերը սկսել էին երկնքից փոքր առ փոքր նոսրանալ. արևի ճառագայթները բավականին զորություն էին ստացել: Դառնաշունչ ցուրտը մեղմացել էր: Կտուրներից կաթկթում էր նորեկ ձյունի հալուցը և փողոցներում գոյացնում էր սաստիկ ցեխ:

Քաղաքի խուլ և հետ ընկած մի անկյունում կանգնած էր փոքրիկ խրճիթը: Փշոտ մացառներով հյուսած ցանկապատը հազիվ սժանում էր նրան մի տափարակից, ուր հրեաներին թույլ էր տված թաղել իրանց մեռելները: Խրճիթի մի կողմը բոլորովին ավերակ էր: Նույն ձմռան մեջ պատահել էր այդ դժբախտությունը. հոտած գերանները չդիմացան սաստիկ ձյունի ծանրությանը, առաստաղն իջավ ցած: Իսկ խրճիթի մնացած մասի փլփլած պատերը դեռ կարողացել էին պահել իրանց վրա մի գետնափոր սենյակի ծածկը: Ժամանակի հնությունից մաշված մամռապատ աղյուսներն ստացել էին մուգ-կանաչ գույն, որ տալիս էր այդ աղքատիկ բնակարանին մի տխուր, մեռելային բնավորություն, որով նա զանազանվում յուր մոտ դրած անշուք գերեզմաններից:

Դուռը ճռռաց: Խրճիթից դուրս եկավ մի մանկահասակ աղջիկ: Նրա հագուստը յուր չքավորությամբ բոլորովին համապատասխան էր այն տխուր շրջանին, ուր ապրում էր նա: Մի բանով միայն նա զանազանվում էր. այդ նրա սիրուն և ախորժելի դեմքն էր: Օրիորդը կլիներ տասնհինգ տարեկան, բայց որպես բարեխառն կլիմայի ծնունդ նրա կուրծքը բոլորովին զարգացած էր: Թուխ հյուսն իջել էին շիտակ թիկունքի վրա և հասակը ձգվել էր ուղիղ՝ ինչպես չինարի: Նա նմանում էր անմահ ոգիներից մինին, որ եկել մխիթարել այդ ավերակների

անբախտ բնակիչներին...

Նա, մի փոքրիկ փայտյա տաշտ ձեռին բռնած, առաջ գնաց, տեսավ խրճիթին կից փլատակներին և սկսեց այնտեղից ցամաք լցնել յուր տաշտի մեջ: Հետո նա բարձրացավ կտուրը, որ հազիվ որոշվում էր բակի տափարակից և սկսավ այն հողով բռնել տանիքի ծակերը, ոտքով կոխ տալ, որ արգելի հալած ձյունի կաթկթոցը սենյակի միջից, որ նույն ժամուն անձրևում էր խեղճ բնակիչների գլխին:

Աղջիկը յուր աշխատությունն ավարտել էր արդեն, երբ խրճթի բակը մտավ մեր ընթերցողին նախածանոթ պատանին: Դա օրիորդի եղբայրն էր:

Տեսնելով եղբորը՝ քույրն ուրախացավ. Փայտ բերեցիր, եղավ նրա անհամբեր հարցմունքը:

Պատանին պատմեց քրոջը յուր դժբախտ դեպքը: Մի քանի կաթիլ արտասուք երևացին աղջկա տխուր աչքերում:

Գրողը տանե՛ նրան... ասաց օրիորդը, բա՛ նա աստված չունե՞ր...

Պատանին ոչինչ չպատասխանեց, նա տրտում կերպով նայում էր քրոջ երեսին: Իմերելի ապտակը լրջացած գույնով դեռ դրոշմված էր խեղճ տղի թշի վրա:

Մեր մայրը կմեռնի ցրտից, Սանդրո ջան, ասաց օրիորդը հուսահատությամբ:

Մինչ նա այս տխրության մեջն էր, հանկարծ աչքն ընկավ խրճիթին կից փլատակներին. նա տեսավ քանդված առաստաղի գերաններից մեկի գլուխը մի քանի թզաչափ երևում էր տակից, իսկույն նրա գլխում ծագեց մի միտք:

Կարա՞ս մի սղոց ճարել, հարցրուց եղբորից:

Ի՞նչ պիտի անես, ասաց Սանդրոն:

Էն գերանից մի քիչ կտրենք:

Կարամ, պատասխանեց Սանդրոն և վազեց դեպի իրանց դրացի հյուսն Օսեփի տունը և մի քանի րոպեից հետո դարձավ սղոցը ձեռին:

Քույր ու եղբայր մոտեցան գերանին, մինը նստեց նրա մի կողմը, մյուսը՝ նրա հանդեպ. նրանք բռնեցին սղոցի երկու ծայրից և սկսան շարժել: Սկզբում նրանք անվարժ էին, չգիտեին ինչպես բանեցնել գործիքը, հետո փոքր առ փոքր սովորեցան, և սղոցն ազատ կերպով վազում էր փտած գերանի վրա: Մինչև կեսը կտրել էին, երբ նրանք հոգնեցան. երկուսի էլ թևիկները թուլացավ:

Ի՞նչ դժար բան է էլի դուրկալությունը, -ասաց Սանդրոն քրտինքը սրբելով:

Հա՛, դժվար է, պատասխանեց քույրը:

Լավ է, որ մերս ինձ դուրկալի մոտ աշկերտ չտվեց:

Կսովորեիր, Սանդրո, էլ թևերդ չէր ցավի: Հիմա կտրենք, ասաց պատանին՝ ոգևորվելով քրոջ խոսքերեն:

Նրանք շարունակեցին գործը: Կես ժամից հետո գերանի կտորը գլորվեցավ գետին:

Վա՛յ... վա՛յ... ոտս... կոչեց պատանին մորմոքելով:

Քույրը թեև շուտով հեռացրուց փայտի կտորը, որ ընկավ եղբոր ոտքի վրա, այսուամենայնիվ նրա ցավը սաստիկ էր. Սանդրոն երկար չէր դադարում մորմոքելուց:

Վա՛յ, քոռանամ... էդ ի՞նչ էլավ, կոչեց օրիորդը, տեսնելով, որ եղբոր բթամատից արյուն էր հոսում:

Նա պատռեց յուր մաշված առաջակալից մի կտոր և իսկույն փաթաթեց վերքը: Արյունը դադարեց, բայց Սանդրոն դեռ անհանգիստ էր: Նա վեր կացավ և կաղկղալով մտավ խրճիթը:

Բայց կտրած փայտը ճղոտելու համար պետք էր տապար: Օրիորդը տարավ սղոցը հետ տվեց Օրիորդին և քանի րոպեից հետո դարձավ տապարը ճեռին: նա հագուստի թևքերը վեր քաշեց և սկսավ կամաց-կամաց մանրել փայտը:

Գ

Գիշերը մութն էր և ցուրտ: Ձյունն սկսել էր նորից մաղել: Քամին սաստիկ փչում էր և ձյունի հոսանքը զարկելով խրճթի թղթով պատած լուսամուտներին, սարսափելի ձայներ էր հանում:

Խրճթի մի անկյունում, պատումը փորած վառարանի մեջ, աղոտ-կանաչագույն լուսով պլպլում էին փայտի մի քանի կտորներ, որոնց լույսը թույլ կերպով ծավալվում էր այդ մռայլոտ բնակարանի մեջ: Երբեմն քամին շվացնելով ներս էր վազում վառարանի ծակից և խեղդող ծխով լցնում էր փոքրիկ սենյակը:

Մարիամը այդպես կոչում էին օրիորդին լուռ նստած դասարանի կողքին, խոնավ գետնի վրա, կարում էր մի բան: Հոգնած և վիրավորված Սանդրոն, հոր հին վերարկուն գլխին քաշած, մրափում էր: Նրանից հեռու, տախտի վրա, կարկատած վերմակի տակից՝ լսելի էր լինում խորին տքտքոց և երբեմն ծանր հառաչանք: Այդ Մարիամի հիվանդ մոր ձայնն էր, որ տանջվում էր լուր ցավերի մեջ... Բացի այդ երեք անբախտներից, խրճթի բնակիչների թվում գտնվում էին փոքրիկ Ցուցան, որ սիրուն գլուխը յուր առջևի թաթիկների վրա դրած, կծկվել էր մի անկյունում և կարծես դժգոհում էր ցրտի սաստկության վրա, այլև մի քանի հատ հավեր, որոնք իրանց կչկչոցով երբեմն ընդհատում էին տնակի մեռելային լռությունը:

Այդ աղքատ գերդաստանը պատկանում էր խարազ Օվանեսին, որ յուր կենդանության ժամանակ հազիվ կարողանում էր հոգալ ընտանիքի ապրուստը: Նա մեռավ վերջին խոլերայից, թողնելով յուր որդիքը դառն աղքատության մեջ: Չքավորությունը շուտով ստիպեց նրա այրիին վաճառել տնից այն բոլոր բաները, որոնք կարող էին որևիցե գին բերել: Նրանք ևս շուտով սպառվեցին, այնուհետև նրանց վիճակն եղավ անտանելի:

Քեթևանը այդպես էր Մարիամի մոր անունը չէր կարողանում գործել, որովհետև նա մի տկար կին էր: Ամուսնու մահվան կսկիծը բոլորովին մաշեց նրան, այնուհետև նա չէր կարողանում բաժանվել հիվանդության մահճից:

Սանդրոյին տվել էին աշկերտ կոշկակար Սիմոնի մոտ յուր հոր արհեստը սովորելու: Տան հոգսը մնացել էր Մարիամի վրա: Խեղճ աղջիկն ամբողջ օրը հանգստություն չուներ: Նա խնամք էր տանում հիվանդ մորը, լվանում էր, կարկատում էր յուր և եղբոր հագուստը: Իսկ պարապ ժամերում նա գնում էր իրանց դրացի լվացարար Կեկելի մոտ, այնտեղ աշխատում էր, օրական մի քանի շայի փող ստանալով, որոնցով գնում էին ցամաք հաց և երբեմն մի կտոր միս, որ Մարիամն եփում էր հիվանդի համար: Գիշերները նույնպես օրիորդը հանգիստ չէր քնում: Դրացիքը նրան տալիս էին կարելու մի բան, որի համար փոքրիշատե վճարում էին:

Այն գիշերը Մարիամը նստած կարում էր մի արխալուղ, երբ լսեց դռան թխկոցը: Ո՞վ ես, ձայն տվեց նա:

Ես եմ, լսելի եղավ դռան ետքից:

Ա՛խ, Նիկոլ, դո՞ւն ես, ասաց օրիորդը, ճանաչելով ծանոթ ձայնը և իսկույն վազեց բաց արավ դուռը:

Եկվորը լվացարար Կեկելի որդին էր, մի առողջ պատանյակ բավականին ուղիղ կազմվածքով և վայելուչ դեմքով: Նա բերեց մի ամանի մեջ կերակուր, որի վրա դրած էր մի կտոր հաց, և տվեց Մարիամին, ասելով՝

Մերս ուղարկեց:

Գնա՛ տաքացիր, Նիկոլ, դու մրսել ես, ասաց նրան օրիորդը և կերակուրը տարավ մոր մոտ: Մայրիկ, տաք կերակուր է, մի փոքր խմի ջրիցը, դու էսօր ոչինչ չես կերել:

Հիվանդն առեց գդալը և դողդոջուն ձեռքով սկսեց ուտել: Մարիամը բռնած ուներ մոր առջև կերակուրի ամանը: Երբ նա վերջացրուց, օրիորդը տեսավ, որ կերակուրից բավականին մնացել էր: Նա զարթեցրուց եղբորը, մտածելով, թե նա

քաղցած էր քնած: Սանդրոն՝ աչքերը ճմռելով բարձրացրուց գլուխը, նրա ուրախության չափ չկար, երբ տեսավ յուր առջև տաք կերակուրը:

Բա՛ դու չե՞ս ուտելու, հարցրուց Նիկոլը:

Ես իշտահ չունեմ... պատասխանեց Մարիամը

Տո, ջուր կտրած, լսելի եղավ հիվանդի ձայնը, ի՞նչու ես մաշում քեզ, դու էլ որ հիվանդանաս, մեզ ո՞վ պիտի պահե...:

Օրիորդը ոչինչ չպատասխանեց: Հիվանդը խորին կերպով ա՛խ քաշեց և թուլացած գլուխը թողեց բարձի վրա: Մարիամը նստած էր վառարանի մոտ, նրա հանդեպ նստել էր Նիկոլը: Սանդրոն դեռ վայելում էր յուր ընթրիքը: Փոքրիկ Ցուցան, պոչը շարժելով, փաղաքշաբար պտուտ էր գալիս նրա շուրջը: Պատանին ձգեց նրան մի կտոր ոսկոր, շնիկը գոհունակությամբ առեց անուշ պատառը, հեռացավ դեպի յուր նվիրական անկյունը և սկսեց յուր մանրիկ ատամներով կրծոտել նրան:

Մի քանի րոպեից հետո լսելի եղավ հիվանդի խռմփոցը:

Նա քնեց, ասաց Մարիամը, և յուր տեղից վեր կենալով, մոտեցավ մորը, ծածկեց նրան ամեն կողմից, որ չմրսե, և կրկին վերադարձավ յուր առաջին տեղը:

Վառարանի մեջ հազիվ պլպլում էին մի քանի կիսավառ ածուխներ: Խրճթի խավարը հետզհետե թանձրանում էր: Մարիամն ավելցրուց մի քանի կտոր փայտ, կրակը բորբոքվեց և սենյակի տխուր պատկերները կրկին նկարվել սկսան նրա աղոտ լուսով:

Դու ո՞ւր էիր, Նիկոլ, ընդհատեց Մարիամը նրանց մեջ տիրող լռությունը:

Բազարումն էի, Մաշո, պատասխանեց Նիկոլը, մեկ մարդից մի սնդուկ լիմոն ունեի առած, աշխատում էի ծախեմ, որ փողը տամ:

Հետո տվեցի՞ր:

Տվի. թե չէի տվել, վա՛յ իմ հալին, կոտը կընկնեի, գիտե՞ս:

Մի սնդուկ լիմոնո՞վ:

Բա՛ ի՞նչքանով, իմ թանխեն ընդամենը հինգ մանեթ է:

Շա՛տ փող ես ունեցի, Նիկոլ, հինգ մանե՛թ... զարմանալով կրկնեց Մարիամը:

Էս ճակտիս քրտինքովն եմ աշխատի, ասաց պատանին՝ ձեռքը տանելով դեպի գլուխը:

Մի քաղցր ժպիտ բաց արավ երկու սիրուն փոսիկներ Մարիամի ամեն մի թշի վրա:

Ինչպե՞ս ես ծախում, Նիկոլ, լիմոնը, հարցրուց նա:

Լցնում եմ մի զամբյուղի մեջ, թևքիցս քաշ եմ տալիս ու էնպես սկսում եմ պտիտ ածել փողոցներում, «լիմոն առեք, հա՛յ լավ լիմոն, սիրո՛ւն լիմոն . . .»: Էդպես բղավում եմ ու բղավում...

Վերջին խոսքերն այնպիսի մի բարձր ձայնով եղանակեց ուրախ պատանին, որ հավերն սկսեցին անհանգիստ կերպով կչկչալ, փոքրիկ Ցուցան, որ նույն ժամուն թաքնվել էր տախտի տակ, դուրս պրծավ և յուր սուր մետալական ձայնով մի քանի անգամ հեծկլտաց, և Սանդրոն, հետևելով Նիկոլի եղանակին, կրկնեց նրա խոսքերն այնպիսի մի հանգով, որ ավելի շփոթ պատճառեց:

Խրճթի տխուր լռությունն ընդունեց մի առանձին կենդանություն:

Քա՛, էդ ի՞նչ արիր, Նիկոլ, խոմ գիժ չե՞ս, ասաց Մարիամը մի կողմից ծիծաղելով, մյուս կողմից կշտամբելով պատանուն:

Բա ի՞նչ անեմ, լիմոնը էդպես են ծախում, խոսեց պատանին ավելի կատակելով:

Դե՛ սուս, դե՛ սուս, հազիվ լսելի ձայնով շշնջաց օրիորդը, մատները Նիկոլի բերնին դնելով: Սո՛ւս, թե չէ մերս կզարթնի

Հիմա խելոք կկենամ, տե՛ս ինչպես սուս կացա:

Պատանին ընդունեց ավելի ծանր կերպարանք, բայց միևնույն ծանրության մեջ կար ծաղրածության բոլոր ձևերը, որով Մարիամը չէր կարող առանց ժպտելու նայել նրա երեսին:

Վառարանի մեջ կրակն սկսել էր ավելի բորբոքվել: Մարիամի գունատ թշերն ստացել էին վարդի գույն: Կրակի լույսը տվել էր նրա դեմքին խիստ գրավիչ հրապույրներ:

Ի՛նչ սիրուն ես էս գիշեր, Մաշո, ասաց նրան Նիկոլը մի առանձին համակրությամբ նայելով օրիորդի երեսին:

Էհ, սիրունությունն ի՞նչ սազ կգա ինձ... պատասխանեց օրիորդը տխրությամբ:

Չէ՛, աստված վկա, սիրունացել ես, տե՛ս, և Նիկոլը տվեց նրա ձեռքը մի կոտրած հայելու կտոր, որ նա առավ պատուհանից:

Մարիամը նայեց հայելուն, տեսավ, իրավ որ բավականին կարմրել էր: Կրակի տաքությունից է, պատասխանեց նա համեստությամբ:

Դրանից հետո ես շատ փայտ կբերեմ, որ վառես, տաքանաս ու միշտ էդպես սիրուն դառնաս... վրա բերեց պատանին ուրախությամբ:

Էհ... թա՛ք մերս լավանա, ես ուրիշ բան չեմ ուզում:

Այդպես պատանին և պատանեկուհին, նստած վառարանի մոտ, երկար խոսում էին և զվարճանում, երբ գիշերն աննկատելի կերպով անցնում էր: Մինչև աքաղաղը երեք անգամ թևքերը թափ տվեց, երգելով յուր սովորական երգը: Նիկոլը, տեսնելով որ Մարիամը նիրհում էր, ինքն էլ գնաց իրանց տուն քնելու:

Դ

Մյուս օրը եղանակը շատ մեղմ էր: Գիշերվա մրրիկը դադարել էր և արևի շողքերն ուրախ ժպիտով խաղում էին նորեկ ձյունի խաչաձև բրլիանտների վրա:

Վաղ առավոտյան լվացարար Կեկելն եկավ Օվանեսենց տուն, Հեթևանի առողջությունը հարցրուց, ուրախացավ, որ հիվանդն այն գիշեր հանգիստ էր քնած, և Մարիամին ասաց, որ դա բաղնիքները լվացք տանե:

Էս սհաթին կգամ, թող կրակը վառեմ, տունն ավլեմ, կգամ, պատասխանեց Մարիամը, շտապելով իրանց տնակի առավոտյան հոգսերը հոգալու:

Գնալով Կեկելի տուն, օրիորդը տեսավ, որ Նիկոլը դեռ նոր յուր զամբյուղն առած փողոց էր գնում: Տեսնելով Մարիամին, պատանին լռությամբ ակնարկեց յուր զամբյուղի վրա, կամենալով դրանով հիշեցնել գիշերվա անցքը: Բայց Մարիամը ոչինչ չպատասխանեց նրան, տեսնելով, որ պատանու մայրն այնտեղ կանգնած էր:

Նիկոլը հեռացավ: Կես ժամից հետո Մարիամը շալակեց մի մեծ կապոց լվացք և սկսավ դիմել դեպի բաղնիքների կողմը:

Սանդրոն նույնպես վաղուց պատրաստվել, ուզում էր յուր վարպետի խանութը գնալ: Նրան մնացել էր միայն յուր կոշիկների հոգսը, նա մտածում էր, թե ի՛նչ հնարք բանեցնե, որ մատները նրանց ծակերից դուրս չպրծնեն: Մանավանդ որ մի ոտքը վիրավորված էր: Ա՛խ, ե՞րբ պիտի պրծնեմ էս մունդրեկներից... ասում էր նա դառն կերպով հոգոց հանելով:

Մինչ խեղճ Սանդրոն այդ մտատանջության մեջն էր, խրճթի դուռը զարկեցին: Քեթևա՛ն, Քեթևա՛ն, լսելի եղավ մի խռպոտ ձայն:

Ա՛խ, էլի եկավ... ասաց հիվանդը վշտալի ձայնով:

Սանդրոն դուռը բաց արավ. հայտնվեցավ մի միջահասակ մարդ, նեղ և խորամանկ աչքերով: Նրա գորշ-պղնձագույն դեմքը կրում էր յուր վրա թափառական ցիգանի բոլոր վայրենի գծագրությունը: Եվ իրավ, այդ պարոնը կոչվում էր՝ Բոշա-Կարապետ:

Փողերը հագրեցի՞ր, դարձավ նա դեպի հիվանդը:

Ախր ո՞րտեղից հազրեմ, Կարապետ աղա, քո հոգուն մատաղ, պատասխանեց Քեթևանը ողորմելի ձայնով:

Օ՛րհնած, էդպես չի ըլի է՛, մի առանձին դժգոհական եղանակով խոսեց Բոշան. գլուխը չես կարացի տալ, շահն էլա տո՛ւր . . .

Ախար ո՞րտեղից տամ, Կարապետ աղա, դու չե՞ս տեսնում իմ հալը... ես հիվանդ, անտեր ընկած եմ... երեխեքս շատ գիշեր քաղցած են քնում...:

Այդ խոսքերն այնպիսի մի դառն կերպով արտասանեց Քեթևանը, որ մի սիրտ, եթե քարից լիներ, դարձյալ կփափկեր: Բայց Բոշայի համար դրանք սովորական բառեր էին, որպիսիք նա հաճախ լսել էր յուր պարտականներից:

Տե՛ս, ես քեզ ասում եմ, Քեթևան, թե որ մինչև էս շաբթի վերջը չտաս, գանգատ կանեմ, ասաց նա սպառնալով:

Աստծուն բաշխե. . . քո որդիկներուն բաշխե . . . աղաչում էր հիվանդը ողորմելի ձայնով:

Բայց Բոշայի համար անբախտի լացը և այրիի արտասուքը ոչինչ նշանակություն չունեին: Նա ինքն իրան բարկանալով խոսում էր՝ էսպես էլ օյին կուլի՞... նաղդ փող տաս ու չկարենաս առնե՞լու . ..

Եվ նրա սատանայական աչքերը լի չարամտությամբ պտտում էին մերկ խրճիթի չորեքկողմը, կարծես մի բան որոնելու նպատակով: Նա տեսավ անկյունում կծկված հավերը. աղվեսի արագությամբ հարձակվեցավ նրանց վրա և բռնեց մի վառյակ ու մի մանուկ աքաղաղիկ:

Սրանք էլա տանեմ, ասաց նա դժոխային ուրախությամբ: Սանդրոն, տեսնելով այդ հափշտակությունը, վրա պրծավ, բռնեց Բոշայի փեշից. Ա՛ղա ջան, ա՛ղա ջան, ո՞ւր ես տանում, էդ մինն իմ «խուճուճիան մամալն է»:

Այդպես էր կոչում պատանյակը յուր նախշուն աքաղաղին:

Դե՛ն կորի գոռաց անգութ վաշխառուն, ա՛յ, ես քեզ նշանց կտամ «խուճուճիան մամալը»... Եվ նա սպառնացավ տղային յուր սարսափելի ապտակը:

Սանդրոն, մի այդպիսի ապտակ մի օր առաջ իմերելից կրած լինելով, զարհուրելով հետ քաշվեց, թողնելով վաշխառուի փեշը: Իսկ անպաշտպան պատանուն օգնության հասավ նրա միակ մտերիմը փոքրիկ Ցուցան: Նա տախտի տակից դուրս պրծավ և յուր սուր ասեղնավոր ատամներով ձիգ ընկավ Բոշայի փեշից: Բայց վաշխառուն յուր ձեռքի ահագին մահակով մի այնպիսի սաստիկ հարված տվեց Ցուցայի գլխին, որ խեղճ շնիկն իսկույն բաց թողեց նրա փեշը, և նրա տխուր կծկծոցը խառնվեցավ Սանդրոյի լաց ու սուգին…

Վաշխառուն տարավ յուր կողոպուտը: Սանդրոյի տխրությանը չափ չուներ, նա շատ էր սիրում յուր նախշուն աքաղաղին: Հիվանդը, տեսնելով որդու արտասուքը, անդադար կրկնում էր. Ա՛խ, էն անիծված էծը... է՛դ ի նչ կրակի մեջ քցեց մեզ…

Այդ խոսքերի մեջ, որ հիվանդն արտասանեց այնպիսի դառնությամբ, կար մի սարսափելի դեպք, որ գլխավորապես պատճառ եղավ նրանց անբախտությանը: Ամուսնու մահից հետո Քեթևանը պարտք առավ Բոշա-Կարապետից տասն ռուբլի փող, ամեն մի ամիսը մեկ ռուբլի տոկոս հաշվելով, տասնվեց ռուբլի պարտամուրհակ տվեց վեց ամիս ժամանակով: Այդ փողերով Քեթևանը գնեց մի այծ, որ յուր երեխեքը կերակրվեին նրա կաթնով: Բայց անգութ բախտը պետք է հասցներ նրանց յուր վերջին հարվածը, այծը երկու ամսից հետո մեռավ: Այնուհետև նրանք դարձան Բոշայի ստրուկը: Ամեն մի վեցամսյակից Բոշան պարտամուրհակը փոխում էր, տոկոսը տոկոսի վրա բազմապատկելով: Անցան մի քանի տարիներ: Քեթևանը յուր տան եղած-չեղածը ծախել՝ նրան էր տվել, բայց տակավին հիսուն ռուբլի պարտական էր: Ամեն անգամ կգար Բոշան ինչ որ ձեռքն ընկներ կտաներ՝ հավ, ձու և այլն: Բացի դրանից, նա յուր տան լվացքը նրանց էր լվանալ տալիս և ոչինչ չէր վճարում: Շատ անգամ Մարիամը կար էր անում նրանց համար և փող չէր ստանում: Այդ բոլորը նրա համար էր միայն, որ Բոշան համբերի և դատարանին գանգատ չանի: Իսկ համբերությունը Բոշայի միակ նպատակն էր, որովհետև օրըստօրե նրա պարտամուրհակի թվանշաններն ավելի խոշոր ձև էին ստանում…

Ե

Երեկո էր: Արևը խոնարհվում էր դեպի յուր գիշերային մուտքը: Ցուրտն սկսել էր սաստկանալ: Փողոցների քարուղիները սառել էին արդեն, երբ Մարիամը, լվացքի ծանր կապոցը գլխին դրած, հետ էր դառնում բաղնիքներից: Նրա հագուստի թրջված թքևերն փեշերքը սառել, տախտակի նման էին դարձել և սպիտակ դեմքը ցրտի սաստկությունից ստացել էր մուգ-կարմիր գույն, իսկ ամբողջ օրը լվացքի մեջ տրորված ձեռքերը բոլորովին լրջացել էին: Նա հետ էր դառնում մի խումբ աղջիկների հետ, որոնց ամեն մինը բերում էր գլխի վրա յուր լվացքի կապոցը:

Նույն ժամուն մի պառավ կին, ոտքից գլուխ սև հագնված, ծածկված սպիտակ չարսավով, հետևում էր այդ ուրախ խմբին, որոնք քչքչալով, խոսելով և ծիծաղելով տուն էին դառնում: Աղջիկները բոլորը համարյա թե խեղճ ընտանիքների զավակներ էին, որպես Մարիամը: Նրանք օրական վարձով աշխատում էին լվացարարների համար: Պառավն աչքը չէր հեռացնում նրանց խմբից, կարծես թե մի բան էր պտրում . «Էդ մինն ամենից լավն է...», ասաց նա յուր մտքի մեջ և ավելի մոտեցավ Մարիամին:

Երբ աղջիկները դուրս եկան բազարից, մտան մի խուլ փողոց, Մարիամը բավականին հետ մնաց յուր խմբից:

Ո՞ւմ աղջիկն ես, հարցրուց նրանից պառավը հազիվ լսելի ձայնով:

Խարազ Օվանեսի աղջիկը:

Հերդ կենում է՞:

Չէ, մեռած է:

Ապա ո՞վ ունես:

Մեր ու մի պստիկ աղբեր:

Ո՞ւմն է էդ լվացքը:

Մեր հարևանինն է:

Ինչո՞ւ ես դու լվանում:

Նա ինձ փող է տալիս: Բաս մերդ աղքատ է՞:

Նա հիվանդ է:

Պառավի ենենգավոր դեմքի վրա վազեց ուրախության մի նշույլ, կարծես նա մոտենում էր յուր նպատակին:

Ո՞րտեղ եք կենում, շարունակեց նա յուր հարցմունքը:

Ջհուդների գերեզմանատան մոտ:

Ասեցիր Խարազ Օվանեսի աղջիկն ես, հա՞:

Հա՛ :

Անունդ ի՞նչ է:

Մարիամը ձանձրացավ այդ բոլոր հարցմունքներից, փոխանակ ուղղակի պատասխանելու, ասաց. Ի՞նչ պետք է քեզ իմ անունը:

Էնպես հարցնում եմ, որդի, քո հերն իմ լավ բարեկամս էր, հոգին լուս դառնա, ի՛նչ լավ մարդ էր հերդ: Եվ պառավը յուր դեմքն այնպես ձևացրուց, որպես թե օրիորդի հոր հիշատակը սաստիկ ցավեցրուց նրան:

Անունս Մարիամ է, պատասխանեց օրիորդը:

Պառավը հեռացավ: Թեև նրա վերջին խոսքերը բավականին ճմլեցին օրիորդի սիրտը, այսուամենայնիվ նա խիստ անախորժ տպավորություն թողեց Մարիամի վրա, որ երևակայում էր, թե դեռ յուր աչքի առջևն է նրա սև սատանայի պես պատկերը:

Մարիամի ընկերուհիքը հետզհետե բաժանվեցան, մտնելով զանազան փողոցներ, նրա հետ մնացին մի քանիսը, որոնք յուր թաղեցիքն էին:

Էդ կնիկը, որ քեզ հետ խոսում էր, Մաշո, շատ անգամ գալիս է բաղնիքները, ուր մենք լվացք ենք անում, ասաց աղջիկներից մինը:

Մի անգամ ես նրան տեսա Գ... ի կտավի ֆաբրիկումը, ուր շատ աղջիկների հետ մենք բանում էինք, ասաց մյուսը:

Նա էնպես գալիս է միշտ խոսեցնում է աղջիկներին, մարդ չէ իմանում, ի՞նչ է ուզում, մեջ մտավ երրորդը:

Է՛հ, հողեմ նրա գլուխը, ասաց մի այլը:

Սև սատանա է, վրա բերեց հինգերորդը:

Այդպես նրանք խոսում էին, երբ հասան հրեից գերեզմանատանը և ամեն մինը բաժանվեցավ դեպի մի կողմ: Բոլորովին մթնել էր, երբ Մարիամը մտավ Կեկելի տունը. նա համբարեց լվացքը և հանձնեց նրան:

Շատ ապրես, ոչինչ պակաս չէ, ասաց նրան Կեկելը:

Նատոն միշտ գողանալ էր տալիս, խոսեց Մարիամը:

Սատկի Նատոն, կրկնեց Կեկելը, միտ բերելով յուր առաջին լվացարար աղջկա հիմարությունները:

Մարիամը մտնելով իրանց խրճիթը, գտավ նրան բոլորովին անմխիթար դրության մեջ: Մայրը դեռ սաստիկ վրդովմունքի մեջ էր Բոշայի պատճառով: Սանդրոյի աչքերն ուռել էին շատ լացելեն: Ցուցան, որպես երևում էր, յուր սրտի անախորժ տրամադրության մեջ էր, որովհետև նա յուր սովորության հարմար այս գիշեր չդիմավորեց յուր աղջիկ-պարոնին, և ո՛չ նրա շուրջը ցատկելով պաչպչեց Մարիամի հագուստի փեշերքը: Հավերը կարծես նույնպես տխուր էին, որ իրանց ընկերներից երկուսը պակասել էր: Իսկ սենյակը սառն էր, որպես գերեզման:

Սանդրոն պատմեց քրոջը Բոշայի անցքը:

Ա՛խ, գրողը տանե նրան... ասաց Մարիամը՝ սրբելով արտասուքը:

Օրիորդի առաջին հոգսն եղավ տաքացնել խրճիթը: Դժբախտաբար նրանց մի օր առաջ կտրած փայտը սպառվել էր: Նորից կտրելու ուժ չկար օրիորդի վրա, որովհետև նա շատ հոգնած էր: Սանդրոյից մի բան խնդրել անկարելի էր, որովհետև նա դեռ ողբում էր յուր աքաղաղի կորուստը: Ի՞նչ պետք էր անել: Քամին կրկին սկսել էր շվշվացնել . երևում էր, որ դարձյալ մրրիկ պետք է լինի: Օրիորդը դուրս եկավ խրճթից և գտավ Նիկոլին:

Նիկոլ ջան, խնդրեց նրան, էդ գերանից մի կտոր կտրե, վառելու փետ չունենք:

Պատանին տեսնելով այդ գործողությունը երկար կտևե, ասաց. Ես փետ կբերեմ:

Դե՛, շուտ բեր, քո հոգուն մատաղ:

Տե՛ս, ես էլ պիտի նստեմ կրակի մոտ ու մտիկ տամ քո երեսին, երբ դու կկարմրես...

Հանաքի վա՞խտ է, Նիկոլ:

Դու ավելի սիրուն ես լինում, երբ կրակի մոտն ես նստում:

Էրնե՛կ քո գիժ գլխին...

Օրիորդի համբերությունը հատավ, ուզում էր գնալ Օսեփի տնից բերել սողոցը, որ ինքը փայտ պատրաստե: Բայց Նիկոլն արգելեց նրան.

Դե՛ լավ, հիմա խելոք կխոսեմ, ասաց նա, և ձեռքով հեզիկ շփելով Մարիամի թշին, վազեց դեպի իրանց տուն, որ փայտ բերե:

Քառորդ ժամից հետո վառարանի մեջ կրակն արդեն պատրաստ էր:

Ջ

Ծննդյան ցրտերը վաղուց անցել էին: Մարտը բերեց յուր հետ խոնավ և անձրևային օրեր: Եղանակը միշտ թխպոտ էր և արեգակը հազիվ էր երևում:

Քեթևանի հիվանդությունը տակավին նույն դրության մեջն էր, նրա կենսական ուժերն օրըստօրե սպառվում էին: Մի ցավալի անցք ավելի մեծ հարված տվեց նրա առողջությանը: Բոշան դատարանին գանգատվել էր, վճռել էին, որ Օվանեսի խրճիթը ծախվի հրապարակական աճրդով:

Խեղճ երեխեքս ո՞րտեղ պահեմ… ախ քաշելով ասում էր անդադար հիվանդը:

Մինչ Քեթևանը յուր ցավերի այդ հոգեվարք դրության մեջն էր, մի առավոտ նրա մոտ եկավ մի կարճլիկ պառավ, թուխ և ցամաք դեմքով, փոքրիկ և խորամանկ աչքերով: Նա երկար նստած խոսում էր Քեթևանի հետ: Մարիամը տանը չէր, նա Կեկելի մոտ զբաղված էր լվացքով:

Էլ աստծուց ի՞նչ ես ուզում... առաջ տարավ պառավը, դու էդպես հիվանդ ես, տունդ ծախում են, ուտելու հաց չունես. հիմա մի էդպեսի մարդ, որ մեր քաղաքի ամենից հարուստն է, ուզում է քեզ օգնություն անել, դու ինչո՞ւ չես ընդունում... էդ է խե՞լք է...

Քեթևանը ոչինչ չպատասխանեց:

Տե՛ս, Քեթևան, շարունակեց պառավը, երկու հարյուր մանեթ էս գլխեմեն տալիս է... լավ հագցնում է... ասում է, թե հետո իմ փողով մի լավ մարդու կտամ... էլ աստծուց ի՞նչ ես ուզում…

Ա՛խ, ես ի՞նչպես իմ ձեռքով երեխես սաղ-սաղ գերեզմանը դնեմ... պատասխանեց հիվանդը արտասվելով:

Հիմա մեր քաղաքում ո՞վ չէ անում էդ բանը... պատասխանեց պառավն ավելի գործագետ մարդու եղանակով: Նրանք՝ որ ուտելու էլ ունեն, խմելու էլ ունեն, էդ բանն էլի անում են... դո՞ւ ինչու չպիտի անես... Ա՛խ, աստված, էդ ի՛նչ եմ լսում... ձայն արձակեց Քեթևանը հառաչելով:

Տե՛ս, Քեթևան, ասում եմ քեզ, հետո կփոշմանես . . .

Թե որ հազար թուման էլ տա, չեմ կարա էդ բանն անել . . . պատասխանեց Քեթևանը վճռական կերպով:

Մինչ նրանք այդ խոսակցության մեջն էին, խրճթի դռները բացվեցան. ներս մտավ Բոշան, նրա հետ պրիստավը և մի տասնապետ: Հիվանդը սարսափեցավ:

Պրիստավը, մի սուր հայացք ձգելով աղքատ խրճթի վրա, դարձավ դեպի պարտատերը. Դե՛, պարոն, ի՞նչ եք կամենում, որ ես գրեմ:

Ինչ որ տեսնում ես, ամենը գրե՛ էլի՛, պատասխանեց Բոշան դիվական սառնասրտությամբ: Էդ կողենքը գրե՛, որի մեջ հիվանդը պառկած է, էդ տախտը գրե՛, էդ հավերը գրե՛, էն պստիկ պղինձը գրե՛, էդ ավելը, էդ չաքմեքը գրե՛...

Չաքմեքի ձայնը լսածին պես Սանդրոյի աչքերը վառվեցան: Դրանք նրա չաքմեքն էին, պատանու նշանավոր կոշիկները, որոնց պատմությունը մեր ընթերցողին հայտնի է: Այն օրվա ցեխի պատճառով Սանդրոն չկարողացավ նրանցով դուրս գալ, ի նկատի ունենալով նրանց ծակերը, այդ պատճառով ձգել էր նրանց տախտի վրա:

Ինչո՞ւ եք գրում իմ չաքմեքը, հարցրուց նա աչքերը լայն բանալով:

Ինչո՛ւ, փող չաժե՞, խոսեց Բոշան:

Հալբաթտա արժե, երեկ կինտոները մի գրվանքա խնձոր էին տալիս, ես չտվի չաքմեքս:

Պարոն, դուք ինչո՞ւ եք վիճում երեխայի հետ, նրանց խոսքը կտրեց պրիստավը պաշտոնական ձևով, օրենքով չէ կարելի գրել այն բաները, որոնք բնակիչներին անհրաժեշտ պետք են:

Բոշան սկսեց ինքն իրան բարկանալ.

Էդ էլ բա՞ն է, էդ էլ օրե՞նք է... փող տաս ու նրա փոխանակ էդպեսի գիրթ-գիբիլ տանես, ու էն էլ չթողնե՞ն...

Քեթևանը պրիստավին տեսածին պես շփոթվեցավ. նա չէր իմանում, թե ինչ էր գործվում յուր տան մեջ: Մարիամը միայն կանգնած դռան հետևը լաց էր լինում: Իսկ Սանդրոն, չաքմեքը ձեռին պինդ բռնած, կանգնել էր, նրանց օրհասին էր սպասում:

Պրիստավը տեսնելով անբախտների այդ ցավալի դրությունը և մանավանդ ճանաչելով Բոշային, թե ի՛նչ ծառի պտուղ էր նա, խղճաց և սկսավ խնդրել պարտատիրոջը, որ դադարե տան կայքը գրել տալուց: Կարծեմ, ավելի լավ կլինի, որ դուք թողնեք շարժական կայքերը և բավականանաք անշարժ կայքով, որովհետև խրճիթն իմ կարծիքով կլրացնե ձեր պահանջը:

Էս քանդված քոխին երկու հարյուր մանեթ կդուրս բերե՞, կտրեց Բոշան պրիստավի խոսքը. ջհուդները տասը թումնից ավելի չեն տալիս, որ խառնեն իրանց գերեզմանատանը:

Երկու հարյուր մանեթի անունը լսածի պես Մարիամը մեջ մտավ. Ի՞նչ երկու հարյուր մանեթ. մերս ասում էր, որ հիսուն մանեթից ավելի քեզ պարտական չէ, գանա դու աստված չունե՞ս...

Քու դեղեն շատ բան կասե, բայց էս իսպոլնի լիստը տեհնում ե՞ս...

Եվ իրավ, Բոշան ցույց տվեց երկու հարյուր մանեթի իսպոլնիտելնի լիստ:

Դուք դարձյա՛լ սկսեցիք երեխայոց հետ վիճել, դարձավ պրիստավը դեպի Բոշան:

Ախար ի՞նչ անեմ, աղբեր, սիրտս տրաքեցնում են.... պատասխանեց Բոշան՝ ձևացնելով խիստ անմեղ կերպարանք:

Մարիամի նկատողությունը բոլորովին ուղիղ էր: Քեթևանը հիսուն մանեթից ավելի պարտական չէր Բոշային, այն ևս մենք գիտենք, թե որպես էր կազմվել այդ սարսափելի գումարը... Բայց միամիտ Քեթևանը արել էր մի մեծ սխալ. ամեն անգամ հին պարտամուրհակները փոխելու և նորը տալու ժամանակ՝ միշտ հները թողել էր Բոշայի մոտ... Միամիտներին այդպես խաբելը Բոշայի սրբազան սովորություններից մինն էր...

Պրիստավը տեսնելով, որ Բոշային համոզելու հնար չկա, գրեց բոլոր այն կահ-կարասիքը, որ օրենքով թույլ էր տրված արեստի տակ դնել և Քեթևանի տնակեն դուրս բերելով այդ բաները, հանձներ նրանց դրացի Կեկելին պահելու համար, մինչև ածուրդ նշանակվի: Բայց Սանդրոյի կոշիկները բարեբախտաբար զերծ մնացին հրապարակական ծախսի նյութ դառնալեն:

Է

Անծանոթ պառավը, որ բոլոր ժամանակը ներկա էր այդ դրամատիկական հանդեսին, պրիստավի գնալեն հետո, ինքն էլ հեռացավ: Մարիամը ճանաչեց նրան: Դա այն կինն էր, որ քանի շաբաթ առաջ օրիորդի հետ խոսել էր բաղնիքների ճանապարհին...

Բոշայի և պրիստավի երևույթը որքան ցավալի ներգործություն ունեցավ խեղճ Քեթևանի տնակի վրա, այնքան ուրախություն ազդեց պառավի սրտին: «Դրանից հետո կընդունես իմ ասածը, Քեթևան...», մտածում էր նա, շարունակելով յուր ճանապարհը:

Երկար այնպես գնում էր նա, մինչև անցավ մի մեծ փողոցից, որի միակ ծայրում շինվում էր հոյակապ տուն: Պարոն Ք... կարճլիկ, ուռած մարդը, փաթաթված բաբորի և սամույրի մեջ, կանգնած էր այնտեղ: Նա զանազան պատվերներ էր տալիս վարպետներին և գործավորներին, որոնք շինում էին այդ տունը: Նա մի ձեռքում բռնած ուներ բաղդադի աղլուխ, որով ստեպ-ստեպ սրբում էր յուր քիթը, մյուս ձեռքում կրում էր մի գավազան, որի գլխին ամրացրած էր երկաթյա սրածայր մուրճ. կարծես այդ նրա համար էր, որ այն մուրճով ծակե ամեն մինի գլուխն, որոնք կհամարձակվեին նրան որևիցե ընդդիմություն գործել: Բայց ամեն անցնող նրան գլուխ էր տալիս, բարևում էր. ամենքը նրա առջև թեքվում էին. երևի թե այդ մարդի մեջ կար մի բան, որ երկրպագելի Էր, այո՛, նա հարուստ էր...:

Վերջացնելով յուր խոսակցությունը, հարուստն իջավ մեծ գետի ափը, այնտեղ մի ընդարձակ ավազուտ գետին նույնպես պատկանում էր նրան: Պարոն Ք... յուր մտքի մեջ գծում էր զանազան ծրագրներ՝ այնտեղ ևս մի բան շինել տալու: Պառավը տեսնելով նա միայնակ է, մոտեցավ:

Հը՛, Կատո, տեսա՞ր, եղավ հարստի առաջին խոսքը:

Էս ոոպեիս էնտեղից եմ գալիս, ասաց Կատոն: Այդպես էր պառավի անունը:

Ի՞նչ շինեցիր:

Շա՛տ ասեցի, շա՛տ խոսեցի, բայց գլուխ չէ գալիս . . .

Ասացի՞ր, որ հարյուր մանեթ եմ տալիս:

Ես իմ կողմից մեկ հարյուր էլ ավելցրի, շատ ուրիշ բաներ էլ խոստացա... էլի ոազի չկացավ...

Պարոն Ք... վրդովվեցավ. առաջին անգամն էր, որ նա նկատեց արծաթի անզորությունը: Նրա կարծիքով արծաթն ուներ յուր մեջ այնպիսի մի ուժ, որով բոլոր տիեզերքը մարդ կարող էր յուր ուզածին պես պտույտ տալ:

Դու աղջկան տեսա՞ր, շարունակեց նա յուր հարցմունքը: Տեսա, բայց աղջիկը դեռ երեխա է, ոչինչ չէ հասկանում:

Նրան ավելի շուտ կարելի է խաբել...

Նա էնպեսներից չէ...

Ուրեմն գլուխ գալու բան չէ՞ հարցրուց պարոն Ք.. . հուսահատ կերպով:

Կատոն չուզեց նրան բացասական պատասխան տալ, միայն մանրամասնաբար պատմեց Բոշայի և պրիստավի անցքը: Պարոն Ք...ի երեսի վրա շողաց վայրենի ուրախության լույսը և նա մի առանձին հրճվանոք խոսեց.

Կատո, քո արևը գիտենա, էդ լա՛վ է էլի, շատ լավ է էլի... հիմա բանը գլուխ կգա... դու մեկ էլ գնա, երկու անգամ էլ գնա, մինչև սարքես... էդ քո փեշակն է, գիտե՛ս էլի, քեզ խոմ խրատ տալ չի ըլի... քո պատիվն էլ խոմ ես չեմ մոռանա, երկու թուման էլ քեզ եմ տալիս, տե՛ս, էս գլխեմեն:

Եվ նա հանեց յուր թղթապահի միջից երկու կարմիր տասը մանեթանոց և տվեց պառավին: Բայց Կատոն, ճանաչելով Քեթևանի երկաթի բնավորությունը, բոլորովին վստահություն չուներ դեպի յուր նպատակի հաջողությունը, այդ պատճառով նա հարցրուց պարոն Ք...ից.

Հենց է՞ն աղջիկը պիտի ըլի:

Հենց էն... մի անգամ տեսա լվացք էր տանում, խելքս գնաց...

Թո՛ղ մի ուրիշը ճարեմ:

Չէ՛, հենց է՛ն...

Մի քիչ դժար է:

Պարոն Ք... բարկացավ. Ի՞նչ ես սարսաղ խոսում:

Կատոն ոչինչ չպատասխանեց, միայն խոստացավ, որ նրա կամքը կկատարե: Վերջացնելով յուր խոսակցությունը կուսանենգը սկսեց գնալ դեպի յուր տուն: Նրա հետքից բերում էին յուր կառքը: Նա անցավ մի օտարազգի ժամատան դռնից, որի մոտ դրած էր փոքրիկ աստվածածնա պատկեր: Նա կանգնեց, գդակը վերցրեց և երեսը խաչակնքելով՝ երկար աղոթում էր նրա առջև: Ճանապարհից անցնողները ջերմեռանդությամբ խոսում էին նրա վրա: «Ինչ բարեպաշտ մարդ է», ասում էին ամենքը:

Ճանապարհին մոտ եկան նրան մի քանի մարդիկ, որոնց մինն ասաց. Ա՛ղա ջան, մի մեռած մշեցու համար փող ենք հավաքում, որ թաղենք, մի քանի կոպեկ շնորհեցեք:

Պարոն Ք... ձեռքը տարավ գրպանը, նայեց, ասելով.

Աստված վկա է, որ հետս փող չունեմ, թե չէ կտայի. խե՜ղճ մշեցի, աստված ողորմի իր հոգուն:

Մարդիկը հեռացան, բայց նույն րոպեին նրա գրպանը լի էր արծաթով: Նա նստեց կառքը, չիցե թե կրկին այդպիսի մարդերին հանդիպե: Քանի րոպեից հետո նա հասավ յուր տուն, այնտեղ, ուր ծեծվել էր Սանդրոն: Դռները բացվեցան: Նա անցավ փառավոր սրահակների միջից, որոնց հատակը պատած էր կարմիր մահուդով: Աջ ու ձախ շարված՝ լիմոնի, նարինջի ծառերը, հազվագյուտ ծաղիկները՝ տալիս էին այդ սրահակներին մշտականաչ ճեմելիքների ձև: Եվ իրավ, տարվա այն եղանակին այնտեղ թագավորում էր գարունքը:

«Աղան եկա՛վ...» սարսափելի՞ մի լուր, որ հեռագրական արագությամբ մի րոպեում շքեղազարդ դահլիճներից հասավ մինչև խոհանոցի ծառաներին ու ախոռատան վերջին սպասավորին: Ամեն տեղ տիրեց գերեզմանական լռություն: «Աղայի» երևույթն ուներ յուր մեջ այնպիսի մի մեծ զորություն, որ խեղդում էր, փշրում էր և ճնշում էր ամեն մի կենդանություն ունեցող ուժ:

նա անցավ դահլիճը: Խորասանի ամենաթանկագին խալիները ծածկում էին այդ փառավոր բնակարանի հատակը: Քիշմիրի ամենագեղեցիկ շալերը կազմում էին նրա վարագույրները: Շռայլությունը թագավորում էր այնտեղ յուր բոլոր ճոխությամբ: Մետալների ազնիվ տեսակները ոսկի, արծաթ, պղինձ, և հանքերի հարստությունը ֆարֆոր, բյուրեղ և թանկագին փայտերը՝ ներկայացնում էին արհեստի և ճարտարության գեղեցիկ արդյունքներ, որոնք կացուցանում էին նրա կահ-կարասիքը: Պատերի վրա ոսկի շրջանակներից նայում էին պատկերներ գեղարվեստի ընտի՛ր գործ: Այդ տեսարանը հիանալի՛ էր . նրանց թվում մի անկյունում նկարվում էր մի այլ պատկեր, նրա մաշված և տխուր դեմքը, սառն որպես մարմարիոն, ներկայացնում էր վաղուց թառամած գեղեցկության արձանը... Շիջած աչքերի մեջ դեռ պլպլում էին վշտահար սրտի և հուսահատության կայծերը... Նրա զունատ շրթունքը շարժվեցան... չարագուշակ հազը դուրս պրծավ մաշված կուրծքից... Դա կենդանի մարմին էր:

Տեսնելով «աղայի» գալուստը, նա շարժվեցավ յուր տեղից և նրա դեմքն ընդունեց խիստ երկչոտ և ցավակցական արտահայտություն: Այդ թշվառը «աղայի» կինն էր...

«Աղան» մի արհամարհական հայացք ձգեց նրա վրա և անփույթ կերպով անցավ յուր մենարանը:

«Ախ, աստված...», հոգվոց հանեց խեղճ կինը և լռեց:

Տխրության ամպերը կրկին անցան տիկնոջ դեմքի վրա, նա կրկին նստեց յուր տեղը և անշարժ մնաց քարե արձանի նման:

Ը

Մենարանը, որ կացուցանում էր պարոն Ք...ի առանձնասենյակը, հանդիսացնում էր յուր մեջ հազվագյուտ հնությունների մի մեծ հավաքածու: Պարսկաստանից, Տաճկաստանից և Հնդկաստանից կային այնտեղ բոլոր այն բաները, որոնք կարող էին գրգռել զարմացք և հիացում:

Այդ պարոնն ինքը ոչ միայն հնագետ չէր, այլ մի առանձին սեր չուներ դեպի հնությունները: Բայց ի՞նչ նպատակով կազմել էր մի այդպիսի փառավոր մուզեում:

Պարոն Ք... ձեռքերը քամակին դարսած անցուդարձ էր անում յուր մենարանի մեջ, երբ սենեկասպաս ծառաներից մինը ծանուցում արավ, թե գեներալ Ն... գալիս է: Այդ լուրը հայտնի կերպով ուրախություն պատճառեց նրան, որովհետև իսկույն նշմարվեցան նրա դեմքի վրա գոհունակության նշույլներ: «Լավ էլավ»... ասաց նա յուր մտքի մեջ և վազեց դեպի դուռը: Նա գտավ յուր հյուրին, երբ նա նոր էր ներս մտնում տան դռնից: Նա հազարումեկ փաղաքշական խոսքերով դիմավորեց «նորին պայծառափայլությանը», նրա խոսքերի մեջ արտահայտվում էին կեղծ-բարեկամական շողքորթություններ և մինչև անգամ ստորաքարշ-ստրկական խոնարհություն: Պարոնը շատ թեքուն էր և առաձգական, երբ հարկավոր էր մինին գրավել...

Նա մտավ յուր այցելուի թևքերի տակ, վեր բարձրացրուց սանդուղքներից և առաջնորդեց մինչև յուր մենարանը:

Գեներալը մի մարդ էր բարձր հասակով, մսուտ երեսով և խորամանկ պաշտոնական աչքերով: Մտնելով պարոն Ք...ի մենարանը, նա աչք ածեց յուր

չորեքկողմը և մի առանձին համակրությամբ ասաց. Այո՛, գեղեցի՛կ է... Բոլորը փեշքեշ է ձերդ պայծառափայլությանը, պատասխանեց պարոն Ք . . . ասիական քաղաքավարությամբ:

Գեներալ Ն... ժպտաց նրա խոսքի վրա և սկսեց մի առ մի զննել մենարանի հնությունները: «Այո՛, գեղեցիկ է, ճշմարիտ, շատ գեղեցի՛կ», կրկնում էր նա անդադար:

Պարոն Ք . . . սկսեց ցույց տալ նրան այն բաները, որոնց մասին ինքը փոքր ի շատե տեղեկություն ուներ: Մենյակի մեկ ճակատի պատի վրա մեխած էր մի ահագին արու առյուծի մորթի, որի վրա ամրացուցած էր կովկասյան եղջերվի գլուխ յուր երկայն ճյուղավոր եղջյուրներով, որոնցից կարգավ քարշ էր տված հնադարյան զենքեր՝ պողովատի զրահ, երկաթե վահան, սաղավարտ և թևնոցներ, կեռ ասիական սուր, նետերով լի կապարճ՝ զարդարած սիրամարգի փետուրներով. աղեղ, երկայն նիզակ՝ Դամասկոսի եղեգնից, գլուխը զարդարած սև փետուրներից հյուսած մի մեծ փնջով և այլն:

Դրանք երևելի Նադիր-Շահի զենքերն են, ցույց տվեց պարոն Ք...:

Նադիր-Շահի զենքե՞րը, կոչեց գեներալը զարմանալով, այդ հազվագյուտ բան է:

Նա առավ վահանը և սկսեց նրա վրա նայել: Ի՞նչ են նշանակում այս ոսկյա նշանագրերը:

Դրանք ղորանից առած աղոթքներ են, գեներալ, որոնք շահին պահպանում էին թշնամու հարվածներից, իսկ մյուսները կախարդական թելիսմներ են . դրանք չէին թողում, որ չար ոգիները մոտենային թագավորին .

Տե՛ս, ի՛նչ խորամանկ են պարսիկները . . .

Միևնույն բաները կան և սաղավարտի վրա, նայեցե՛ք, գեներալ, ասաց պարոն Ք... տալով նրան պողովատի սաղավարտը յուր նիզակի նման բիզ գլխով:

Ուրեմն այս սաղավարտն անխոցելի էր պահում նրան:

Իհարկե, ձերդ պայծառափայլություն, պատասխանեց պարոն Ք... լի սնոտիապաշտությամբ. նայեցե՛ք այս թրին:

Հրաշալի՜ բան է, ասաց նա, սուրը յուր արծաթե պատյանից դուրս քաշելով, այս ոսկյա տառերը երևի մի բան են նշանակում, ցույց տվավ նա սրի վրա:

Այդտեղ թագավորի անունն է դրած ու նրա մեծ հաղթությունները:

Ո՜րքան սպանած կլինի Նադիր-Շահն այս թրով... Շահի գենքերից նրանք անցան այլ հնությունների:

Մի վագրի մորթու վրա, նույնպես եղջերվի գլխից քարշ էին ընկած հնդկական ֆակիրի գործիքներ:

Դրանք ի՞նչ հրեշավոր բաներ են, հարցրուց գեներալը ծիծաղելով:

Դրանք դերվիշի պարագայք են. ահա՛ նրա գդակը և քամարը արձանագրված զանազան նշանագրներով. այդ նրա եղջերափողն է. այդ ընծու մորթով ծածկվում է նա. ահա՛ տապարը և քաշքուլը, վերջինը շինված է հնդկա-ընկուզից . տեսե՛ք, գեներալ, ի՛նչ սիրուն քանդակներ ունի, դրանք բոլորը արաբական տառեր են. Ֆրիդովսի երգերի ամենագեղեցիկ տողերից քանդակած է նրա վրա:

Նրանք զննեցին զանազան ասիական ազգերի երաժշտական գործիքները՝ սկսյալ Թիֆլիսի զուռնայից մինչև Շիրազի սանթուրը և տեսան զանազան ասիական ամաններ և անոթներ, որոնք մի ժամանակ զարդարում էին մեծ իշխանների սեղանները: Երբ նորին պայծառափայլությունը հագեցրել էր յուր հարցասիրությունը, նստեց փառավոր բազկաթոռի վրա, պարոն Ք...ն դրեց նրա առջև Հավանայի թանկագին սիգարներ, որոնք լցրած էին ջայլամի ձվի մեջ քանդակած գեղեցիկ նկարներով, որ կանգնած էր արծաթե ոտիկների վրա:

Այդ ևս սիրուն բան է, ասաց գեներալը նայելով սիգարների ամանին. երևի այդ բոլորը շատ փող արժե ձեզ:

Շա՛տ, խիստ շա՛տ... մի առանձին հանգով պատասխանեց պարոն Ք...

Բայց նա, կամենալով իշխան Ն...ի ուշադրությունը գրավել իրան ավելի կարևոր առարկայի վրա, փոխեց խոսակցության ձևը.

Ձերդ պայծառափայլությունը երկա՞ր կմնա մեր քաղաքում:

Մի ամիս միայն, բայց ես տանջվում եմ կացարանի մասին ինձ ձանձրացրուց այդ հյուրանոցը. ասում են այս քաղաքում նրանից լավը չկա:

Ողորմություն արեք, գեներալ, ի՞նչպես կարելի է այստեղ հյուրանոցում ապրել, եթե ձերդ պայծառափայլությունը շնորհ կանե, ես ունեմ գեղեցիկ կահյալ տուն բոլոր սարք ու կարգով:

Դուք նրան վարձո՞վ եք տալիս:

Ո՛չ, դուք կարող եք այնտեղ բնակվել, որպես ձեր սեփական տան մեջ. այնտեղ դուք կգտնեք ամեն ինչ, որ ձեզ հարկավոր կլինի, մինչև անգամ... Վերջին խոսքը պարոն Ք... մոտ գնաց և ասաց գեներալի ականջին:

Խա՛... խա՛... խա՛... ողորմությո՛ւն արեք, արձակեց գեներալը խիստ ուրախ ծիծաղ. այս ալևոր մազերին ի՞նչ կսազի ձեր ասածը... մեր դարն անցավ, ես և դուք ալևորներ ենք, թո՛ղ երիտասարդները մտածեն դրա վրա...

Գիտե՞ք, գեներալ, մենք հայերեն մի առած ունենք, թե՝ «պառավ ձին էլ գարի կուտի»:

Խա՛... խա՛... խա՛... ի՞նչպես, ի՞նչպես, մեկ էլ ասեք:

Պարոն Ք... կրկնեց միևնույն առածը:

Այդ հիանալի՛ խոսք է, կնշանակե՝ մենք էլ հետ չպիտի մնանք անուշ գարիից...

Վերջին զվարճախոսությունը պատճառեց իշխան Ն...ի մեջ մեծ ուրախություն. նրանք երկար սրախոսում էին, ծիծաղում էին, մինչև պարոն Ք... հարմար միջոց գտնելով խոսակցությունը դարձրեց յուր նպատակներին մոտ առարկաների վրա: Նրանք սկսեցին խոսել զանազան բաներից և կապալներից: Եվ գեներալը արեց

նրան մի քանի խոստմունքներ...

Իսկ պարոն Ք... մտածում էր յուր պատվելի հյուրին մի բան ընծայել յուր հնություններից: Այդ իսկ նպատակով կազմած Էր այդ թանկագին հավաքածուն:

Եթե ձերդ պայծառափայլությունը կբարեհաճեր ինձ ավելի բախտավորել, ընտրեցեք, խնդրեմ, իմ հնություններից մի բան, որպես բարեկամական հիշատակ ձեզ հետ Պետերբուրգ տանելու:

Ողորմություն արեք, պատասխանեց գեներալը, հնությունների վրա միայն կարելի է նայել և զվարճանալ:

Ես խնդրում եմ...

Գեներալը բարեհաճեց ընդունել Նադիր-Շահի զենքերը: Պարոն Ք... մինչև գետին խոնարհելով, շնորհակալություն հայտնեց և առաջնորդեց յուր պայծառափայլ հյուրին մինչև դուռը:

Երբ պարոն Ք... յուր սրտի ամենազվարճալի տրամադրության մեջ, որպես մի մարդ, որ յուր որսն արդեն ծուղակի մեջն էր գցել, դառնում էր դեպի յուր մենարանը, սրահակի անկյունումը երևաց մի երկչոտ կերպարանք . նա յուր դողդոջուն մարմինը մի երկու քայլ առաջ տարավ, և պարոն Ք..ին դիմավորելով ասաց.

Աղա ջա՛ն:

Ի՞նչ է, գոռաց «աղան»:

Իմ... իմ... ամսականը: Սուպովնիկը կոտրեցիր, հերիք չէ՞, որ ամսական էլ ես ուզում:

Աստված է վկա, ա՛ղա ջան, ես չեմ կոտրել:

Բաս սատանան կոտրե՞ց:

Ես ի՛նչ գիտեմ, ա՛ղա ջան:

Կորի՛ր:

Մեր երկիրը պետք է գնամ, քրեհի փող չունեմ, աստծու խաթրու իմ ամսականը մի՛ կտրի:

Կորի՛ր, ասում եմ քեզ:

Խեղճ պատանին յուր արտասուքով լի աչքերը դեպի երկինք բարձրացրեց և սառած մնաց յուր տեղը:

Թ

Քսան տարի առաջ Կ... քաղաքի հետ ընկած փողոցներից մինի մեջ պարոն Ք... և յուր եղբայրն ունեին փոքրիկ խանութ, նրա դուռը միշտ բաց էր լինում ոչ միայն հասարակ օրերում, այլև տոներին, երբ սովորաբար այդ քաղաքի բազարը կողպվում էր: Խանութպանները նախ գնում էին եկեղեցի, ապա դեպի այգիները դիմելով՝ այնտեղ անձնատուր էին լինում զանազան զվարճությունների: Չէ կարելի որոշ անուն տալ, թե ի՛նչ վաճառքների խանութ էր այդ: նա նմանում էր մեծ ճանապարհների վրա իջևանի մոտ գտնված մի գինետան, ուր հաճախորդը կարող է գտնել ամեն բան, ինչ որ նրան պետք էր: Այնտեղ կային ասիական գործվածքների զանազան տեսակներ, որպիսի են՝ կտավ, շիլա, չիթ, ղադար և այլն: Այնտեղ կային՝ սկսյալ ըմպելիքներից, ձկնեղեններից, մինչև մոմ, լոբի, սոխ, թեյ, շաքար և ճանճերից կեղտոտված կոնֆետներ, որոնց կաղանդի տոներին միայն մայրերին սիրեկան մանչերը, մի քանի կոպեկ ստանալով, կգնեին և ուրախ-ուրախ վազ կտային իրանց ընկերների նախանձը գրգռելու:

Երկու եղբայրներն այնքան սերտ կերպով կապված էին իրանց խանութին, որ ավագ եղբայրն առավոտից մինչև կեսգիշեր կարծես մեխած էր յուր դախլին: Իսկ կրտսեր եղբայրն անդադար շարժողության մեջ էր. նա կամ ապրանք էր դարսում, կամ նրանց փոշին էր սրբում, կամ խանութի դռան առաջն էր ավլում, ջուր սրսկում, որ հով լինի:

Խանութը գտնվում էր քաղաքի այն թաղումը, որի բնակիչները չէին վայելում բախտի առանձին բարիքները, և կարելի է ասել, որ նրանք մեծ մասամբ

աղքատներ էին: Չնայելով դրան, նրանց առևտուրը բավականին լավ էր գնում, մանավանդ որ խանութպանները հավատարմություն ունեին դեպի իրանց մուշտարքը և շատ անգամ վաճառքը թողնում էին անվճար: Իսկ այդ կրեդիտն էժան չէր նստում գնողներին, որովհետև նրանց սարսափելի կերպով ծանրաբեռնում էին ոչ միայն ապրանքի գների մեջ, այլև տոկոսների մեջ, որ բազմապատկում էին պարտամուրհակ առնելու միջոցին: Այդ մի ընդհանուր կանոն է ասիական մանրավաճառության մեջ: Այդ եղանակով իրանց գործը վարելու հետևանքն այն եղավ, որ շատ չտևեց պարոն Ք…ի դախլը լցվեցավ զանազան պարտամուրհակներով և նրանց թվում ավելացան արծաթի և ոսկու բաներ, որոնք դրված էին նրանց մոտ որպես գրավներ: Այդ այն ժամանակն էր, երբ մարդիկ նահապետական պարզամտությամբ մտածում էին, թե փողի պարտքը մարդու հոգու պարտքն է, եթե այս կյանքումը չվճարվի, մյուս կյանքում սատանաները նրա մարմնի մսից կկտրեն և պարտատիրոջը կտան: Նրանք ունենալով մի այդպիսի պարզամիտ, միևնույն ժամանակ բարոյականության մաքրության պահպանած ամբոխի հետ առևտուր, շատ հազիվ էր պատահում, որ կորուստ ունենային իրանը ապառիկների մեջ:

Քանի տարի նրանց առևտուրն այդպես շարունակվելուց հետո նրանք բաց արին մի նոր խանութ բազարի ամենալավ մասումը, ուր նրանց ապրանքի թվում այժմ չէր գտնվում շիլա, կտավ և ո՛չ սոխ կամ կոնֆետ, այլ ամբողջ խանութը լցված էր մանուֆակտուրայի ընտիր տեսակներով: Այդ մի քայլ էր, որով նրանք ոտք դրեցին հարստության մի որոշյալ աստիճանի վրա:

Շատ չանցավ, երկու եղբայրներն այնպես ընդարձակեցին իրանց առևտրական շրջանը, որ փոխանակ երկրորդական ձեռքերից գնելու իրանց վաճառքը, սկսան ուղղակի հարաբերություն ունենալ Մոսկվայի ֆաբրիկաների և նշանավոր առևտրական տների հետ: Իրանց գործավարության մեջ նրանք այնքան ճիշտ էին, որ շուտով ստացան մեծ վարկ, որով գրավեցին մոսկվացիների համարումը դեպի իրանց հավատարմությունը: Այդ առիթ տվեց նրանց մեծ գումարների ապրանք գնել անվճար, վեց ամիս, մի տարի, կամ ավելի ժամանակներով: Չնայելով, որ նրանց գործը միշտ հաջողակ էր դնում, հայտնի չէ ի՛նչ հրաշքով նրանց մեծամեծ խանութների ապրանքները հանկարծ անհետացան, և նրանք դադարեցրին իրանց առևտուրը . . . Մենք չենք ուզում մտնել այդ երեվույթի

խորին գաղտնիքների մեջ և ոչ նրա պատճառները քննելու նպատակ ունենք, միայն կասենք, որ ավագ եղբայրը՝ պարոն Ք... դիմեց դեպի Մոսկվա, հայտնեց պարտատերերին իրանց դժբախտությունը, և մեկ ռուբլու փոխարեն 20 կոպեկ վճարելով, ազատեց յուր պարտամուրհակները: Այդ անցքն եղավ այնպես աննկատելի կերպով, որ նրանց քաղաքացիք ոչինչ չհասկացան, որովհետև այնտեղ նրանք պարտքեր չունեին:

Եվ քսան տարի չէ անցկենում, յուր խանութում պղպեղ և լոբին կոնֆետի հետ ծախող մանրավաճառի քսակից միլիոնների ձայներ են լսվում...

Այժմ դառնանք դեպի այն թշվառ արարածը, որին մենք թողեցինք դահլիճի անկյունում: Դա պարոն Ք...ի անբախտ օրերի մտերիմ ընկերուհին էր, որի հետ ամենայն համբերությամբ տարել էր նա աղքատության ծանր լուծը. Չնայելով որ այժմ նա մի քանի երեխաների մայր էր, չնայելով որ այժմ նա մի հարուստ տանտիկին էր, այսուամենայնիվ նա յուր բոլոր ճոխությունների մեջ չէր գտնում ոչինչ երջանկություն: Նրա ամուսինն այն մարդերից մինն էր, որոնց համար ռամկորեն ասում են՝ «դուրսը քահանա, ներսը սատանա»: Եվ իրավ, այդ մարդն ընտանեկան շրջանից դուրս հեզ էր որպես գառնուկ, իսկ յուր տան մեջ վայրենի որպես գազան:

Տիկին Նատալիան այդպես էր նրա անունը այն կնիկներից մինն էր, որի թե բարոյական ազնիվ հատկությունները և թե մարմնական վայելչությունքը տալիս էին նրան իրավունք ուիրելի լինել ամենին: Նրա դեմքը գեղեցիկ էր և դուրեկան, նա սրտով բարի էր որպես հրեշտակ: Ոչ ոք նրանից չէր նեղացած, ամեն ծանոթները սիրում էին և հարգում էին նրան: Միակ մարդը, որին ատելի էր նա, էր նրա ամուսինը: Այդ ատելությունն սկսվեց այն օրից, քանի նրա ամուսինն ավելի և ավելի բարձրանում էր յուր հարստության աստիճանները, և քանի նրա արծաթն առիթ էր տալիս նրան ավելի խրվել յուր մոլությունների մեջ: Զարմանալի է, որ նախախնամությունն ըստ մեծի մասին տալիս է այդ բռնակալներին համբերող կանայք: Իսկ այդ համբերությունը խիստ թանկ արժեց տիկին Նատալիային. նրա մարմնական զորությունները օրըստօրե սպառվում էին և նա զգում էր, որ արագ քայլերով մոտենում է գերեզմանին...

Ամուսնու արհամարհական սառնասրտությամբ նրա մոտից անցնելը, երբ նա նստած էր դահլճի անկյունում, այնպիսի մի սպանողական տպավորություն գործեց նրա վրա, որ տիկինն այլևս չկարողացավ զսպել իրան և արտասուքն ակամա կերպով սկսավ գլորվիլ նրա գունատ թշերի վրա: Երկար այնպես նստած էր նա այդ խռովության մեջ, հետո վեր կացավ յուր տեղից, կամենում էր դեպի պատշգամբն անցնել, մի փոքր ցրվելու սրտի ամբոխմունքը, երբ սրահակի մեջ հանդիպեց նրան նույն ծառան, որ պարոն Ք. . . ից ամսական էր պահանջում:

Ի՞նչու ես կանգնած, հարցրուց տիկինը:

Իմ ամսականը.. . աղջիկ-պարո՛ն, աղան չտվեց:

Այդ խոսքերի միջոցին խեղճ պատանին այնպիսի մի ցավակցական դեմք ձևացրուց, որ իսկույն շարժեց տիկնոջ խղճմտանքը:

Ա՛ռ, տվեց տիկինը տասն ռուբլիանոց արծաթ:

Երբ ծառան կամենում էր յուր շնորհակալությունը հայտնել, հեռացի՛ր, թող չտեսնե քեզ, ասաց տիկինը և անցավ դեպի պատշգամբը:

Ծառան, մի քանի անգամ գլուխ տալով, հեռացավ:

Ժ

Ապրիլ ամսի վերջին շաբաթն էր: Հովասուն օդը շնչում էր գարնանային թարմությամբ: Աստղազարդ երկինքը պարզ էր, որպես կաթնային օվկիանոս: Լուսնյակն ամեն տեղ թափում էր յուր արծաթափայլ լույսը:

Գիշերը մոտենում էր յուր կեսին:

Որպես գիշերային Վեստալկա, յուղային ճրագը ձախ ձեռից քաշ տված, Քեթևանի խրճիթից դուրս եկավ մի մանկահասակ աղջիկ, զարդարված նոր և խշխշուն հագուստով: Նրա հագուստը սեղմելով անցավ նեղ դռնից և նա հայտնվեցավ բակում: Երևում էր աղջիկը բոլորովին սիրահարված էր յուր

զարդարանքով. նա անդադար հետ ու առաջ էր նայում, ուղղում էր հագուստի ծալքերը, ուղղում էր յուր փարիզյան գդակի վարդերը և զմայլվում էր...

«Մի հայելի էլ չկա, որ մտիկ անեի», ասում էր նա ինքն իրան և շտապելով դիմում էր դեպի լվացարար Կեկելի տուն:

Փոքրիկ Ցուցան հայտնի չէ ի՛նչ չարամտությամբ նույն ժամուն հոտհոտալով վազվզում էր բակումը, նա, տեսնելով աղջկան, հարձակվեցավ նրա վրա և քիչ էր մնում, որ պատռե նրա փեշը:

Ա՛յ, սա՛տկես դու, քոռացե՞լ ես, ճչաց աղջիկը: Շնիկը ճանաչեց նրան, սկսավ ներողություն խնդրել, մի քանի անգամ պտույտ գալով օրիորդի շուրջը և քսքսվելով նրա փեշերին: Աղջիկը մտավ լվացարարի տունը: Կեկելը նույն ժամուն ութո էր քաշում:

Եկա մնաք բարով ասելու, Կեկել ջան, ասաց օրիորդը, ընկնելով նրա գիրկը:

Կեկելը շփոթվեցավ, նա հազիվ կարողացավ ճանաչել, որ յուր գրկումը Մարիամն էր:

Ես գնում եմ, Կեկել ջան:

Ո՞ւր, հարցրուց լվացարարը զարմանալով:

Չեմ գիտում... մերս ինձ մարդի տվեց:

Ո՞ւմ տվեց:

Չեմ գիտում, Կեկել ջան, տե՛ս էս շորերը, էս շլյապեն, էս քորոցը, էս բրասլենտները... էս ամենն իմ մարդն է ուղարկել, ցույց տվեց Մարիամը ուրախ ժպիտն երեսին:

Կեկելի գույնը շուտ-շուտ փոխվում էր, նա չէր կարողանում հավատալ յուր ականջներին:

Դու տեսա՞ր էն մարդուն:

Ես չեմ տեսի, Կեկել ջան, բայց էն պառավը, որ էս շորերը բերավ, ասում էր շատ լավ մարդ է:

Ի՞նչ պառավ:

Մեկ պառավ էլի՛, նա հիմա մեր տանն է, երկու հարյուր մանեթ էլ փող տվեց մորս: Էլ Բոշան, էնպես չէ՞, Սեկել ջան, էլ չի կարա մեր տունը ծախել: Կեկելի զարմանքն ավելի սաստկացավ:

Դու ճանաչում ե՞ս էն պառավին:

Չէ՛, Կեկել ջան, մի անգամ ես նրան բաղնիքի ճամփումը տեսա, շատ խոսեց ինձ հետ, պատասխանեց օրիորդը մտաբերելով անցյալը: Էսօր էլ իրիկնապահին նա ինձ բաղնիք տարավ, լեղցրուց, ֆայտոնով գնացինք, Կեկել ջան, ա՜խ, ի՛նչ լավ էր ֆայտոնը, էնպես սլլում էր... գնում է՜ր ու գնո՜ւմ...

Մարիամն այնպիսի մի ոգևորությամբ արտասանեց վերջին խոսքերը ֆայտոնի մասին, որ նա առաջին անգամն էր նստել, մինչ Կեկելը, չնայելով յուր բոլոր վրդովմունքին, սկսավ ակամա կերպով ծիծաղել:

Լավ, դու էն ասա՛, աղջի, պսակն ու հարսանիքը ե՞րբ է լինում, հարցրուց Կեկելը:

Մարիամը շփոթվեցավ, չգիտեր թե ի՞նչ պատասխանե: Չեմ գիտում, էս գիշեր ինձ տանում են, ասաց նա միամիտ կերպով:

Հետո դու էն մարդին պետք է սիրե՞ս:

Բաս չի՞ պիտի սիրեմ, Կեկել ջան, ախար էս շորերը նա է ուղարկել:

Կեկելը, չհասկանալով որ բոլորովին պարզամտությամբ ասաց Մարիամն այդ խոսքերը, ընդմիջեց նրան մի փոքր հանդիմանական ձևով.

Տո՛, ծամ կտրած, դու ախար Նիկոլին էիր սիրում:

Էլի կսիրեմ, Կեկել ջան, բա՛ս Նիկոլին կմոռանա՞մ, պատասխանեց օրիորդը խիստ զգալի կերպով: Քեզ էլ էի սիրում, Կեկել ջան, դու ինձ չէիր ծեծում, քեզ էլ

չեմ մոռանա, շուտ-շուտ քեզ մոտ կգամ:

Այդ խոսքերի մեջ կար այնքան պարզություն, որքան մաքուր և անմեղ էր Մարիամի հրեշտակային սիրտը:

Խե՛ղճ աղջիկ... ասաց Կեկելն անլսելի ձայնով և երեսը մի կողմ շրջելով սրբեց արտասուքը:

Հիմա գնանք մեր տուն, Կեկել ջան, էն տեղից դու ինձ ճանապարհ կդնես, աղաչում էր Մարիամը:

Չէ՛, Մարիամ, ես չեմ գա, ես չեմ ուզում տեսնել էն պառավի երեսը...

Նա շատ լա՛վ կնիկ է, Կեկել ջան, էնպես լա՛վ խոսում էր որ . . .

Ի՞նչ էր խոսում:

Մերս չէր ուզում ինձ էն մարդին տա, հենց լաց էր ըլում ու լաց ըլում... Կեկել ջան, ի՞նչու էր լաց ըլում:

Չեմ գիտում: Ասա՛, ինչ էր խոսում:

Ինձ հանեցին դուրս, ես չլսեցի ինչ խոսեցին . հետո մերս կանչեց ինձ յուր մոտ, ասաց՝ «էդ կնիկն ինչ որ ասե, դրան ականջ դի՛ր»: Ես տեսա էն վախտն էլ նրա աչքերումն արտասուք կար:

Կեկելը ղրկեց օրիորդին և երկար նրան ճնշած ուներ յուր կուրծքի վրա . նա չէր կարողանում բաժանվել այն աղջկանից, որին այնքան սիրում էր:

Դու էլ լաց ես ըլում, Կեկել ջան, ի՞նչու ես լաց ըլում, հարցնում էր Մարիամը տխրությամբ: Մի՛ լաց ըլի, ես չեմ գնա էն մարդի մոտ, էլի քեզ մոտ կմնամ, քեզ համար ութո կքաշեմ, բաղնիքը լվացք կտանեմ:

Խե՛ղճ աղջիկ. . . կրկնեց Կեկելն անլսելի ձայնով:

Սույն միջոցին Կեկելի խրճթի դռանը լսելի եղան մելոդական հնչումներ մի վրացերեն երգի.

Ա՛խ թըվալեբո, թըվալեբո,
Շավ թըվալեբո, թըվալեբո:

Դռները հետ գնացին, Նիկոլն ուրախ-ուրախ ներս մտավ ասելով.

Է՛յ, շենի ճիրիմե, էսօր օխտը աբասու ծախել եմ:

Նրա աչքին երևաց Մարիամը: Էս ո՞վ է, կոչեց նա հետ-հետ քաշվելով: Նա կրկին մի քանի քայլ առաջ գնաց, և ուղիղ օրիորդի երեսին նայելով, ձայն տվեց. Տո, Մաշո՛, դո՞ւն ես... լա՛վ բարիշնա ես դառի...:

Ես եմ, պատասխանեց Մարիամը կարմրելով:

Որտեղի՞ց է էդ շորերը:

Մարդս է ուղարկի, Նիկոլ ջան, պատասխանեց օրիորդը:

Նիկոլ ջա՛ն, չէ՛, զա՛հրումար... մարդը՞դ... տեհնում ե՞ս... Պատանու աչքերը վառվեցան, նա սպառնացավ օրիորդին յուր սարսափելի մուշտին: Դե՛, էս նիմուտին, է՛ս նիմուտին, ասում եմ քեզ, հա՛նի էդ շորերը, թե չէ դիփ կպատռտեմ, քեզ էլ կսպանեմ, քու մարդուն էլ...

Ինչո՞ւ ես սպանում, Նիկոլ ջան, խեղճ չէ՞, պատասխանեց օրիորդը միամտությամբ:

Պատանին ավելի կատաղեցավ: Տո՛, էդ ի՞նչեր ես խոսում, գժվե՞լ ես... Թողե՛ք դրան ես խեղդեմ: Եվ նա գազանի պես հարձակվեցավ Մարիամի վրա:

Տո՛, Նիկոլ, տո Նիկոլ, ի՞նչ ես անում, մեջ մտավ Կեկելը: Նա խարում է քեզ, նա հանաք է անում, կոչում էր խեղճ կինը, աշխատելով հանգստացնել որդու բարկությունը:

Այդ խռովության մեջ Մարիամը միջոց գտնելով, դուրս վազեց Կեկելի տնից: Պատանու մայրը նրա ետքից կողպեց դուռը, որ Նիկոլը դուրս չգնա:

Մարիամը բոլոր մարմնով դողում էր. նա չէր կարողանում հասկանալ, թե ինչո՛ւ գրգռեց Նիկոլի բարկությունը . նա կարծում էր, թե Նիկոլը կուրախանա յուր նոր հագուստով: Նրա դեմքը բոլորովին գունատված էր կա վիճի նման, երբ նա մտավ իրանց խրճիթը:

Ի՛նչ շատ ուշացար, Մաշո ջան, ասաց նրան պառավը որ սև սատանայի նման սպասում էր նրան: Դե՛, գնանք, քո հոգուն մատաղ, ուշանում ենք:

Մարիամը ոչինչ չպատասխանեց: Նա քարե արձանի նման սառած կանգնել էր, չգիտեր, թե ի՛նչ անե:

Գնանք, Մաշո ջան, ուշանում ենք, կրկնեց պառավը:

Բաս մերս չի՞պիտի գա ինձ հետ, հարցրուց Մարիամը նա մոտենալով մոր մահճին:

Քեթևանի առողջությունը վերջին օրերում բավականին ուղղվել էր, բայց Մարիամը զարհուրեցավ, երբ գտավ նրան սաստիկ տաքության մեջ:

«Ա՛խ, աստվա՛ծ, ի՛նչ բան արեցի...» կրկնում էր հիվանդը խորին կերպով հոգոց հանելով: Նա տանջվում էր խղճի տենդային դրության մեջ . . .

Մայրի՛կ, մայրի՛կ, ձայն տվեց աղջիկը:

Հիվանդը ոչինչ չպատասխանեց, վերմակը քաշեց գլխին և ծածկեց երեսը:

Նա լաց է լինում . . . դարձավ Մարիամը դեպի պառավը. ես չեմ կարող գալ, նրա քեփն էլի վատացավ:

Նա քնած է, Մարիամ, դու նրան մի՛ նեղացրու, պատասխանեց պառավը: Մենք գնանք, ֆայտոնով կտանեմ քեզ, կես սհաթ չի քաշի, էլի ետ կբերեմ:

Ի՞նչպես թե քնած է... լսի՛ր նա խոսում է:

«Ես նրան իմ ձեռքով գերեզման դրի . ..», լսելի եղավ հիվանդի ձայնը:

Նա տաքության միջումն է խոսում, Մարիամ, գնանք, մի՛ ուշացիր, ստիպում էր պառավը:

Լավ, ինձ ի՞նչի համար ես տանում, հարցրուց օրիորդը:

Էնպես, էլի, Մարիամ... Մերդ չասե՞ց, քեզ, ես ինչ որ ասելու ըլեմ, դու պիտի ընդունես:

Ասեց:

Դե՛ գնանք:

Բայց էլի շուտ ետ պիտի բերես, որ մորս մոտ ըլեմ:

Կբերեմ, աստված է վկա:

Էս գիշեր, գիտե՞ս:

Հա՛, էս գիշեր: Մարիամը մոտեցավ քնած Սանդրոյին, զարթեցրուց նրան: Սանդրո ջան, նստիր մայրիկի մոտ, ջուր ուզելու լինի տո՛ւր, չքնես, ես էս նիմուտին գալիս եմ: Եվ նա տվեց եղբորը մի բուռը կոնֆետ, որ ստացել էր պառավից: Սանդրոն, տեսնելով քաղցրավենիքը, էլ չխոսեց և համաձայնվեցավ քրոջ պատվերներին:

Նրանք դուրս եկան: Խրճթի անկյունում սպասում էր մի կառք: Կատոն յուր «անմեղ վաճառքը» դրեց կառքի մեջ: Ձիաները սլացան, կառքն անհետացավ գիշերային խավարի միջում:

Նույն րոպեին Կեկելի խրճթի փակված դռները փշրվեցան, դուրս պրծավ կատաղած Նիկոլը... «Թողե՛ք ես էն մարդուն սպանեմ... թողեք...», գոռում էր նա վազվզելով խավարի մեջ:

Բայց նա ոչինչ չգտավ. գազանի պես վազեց Քեթևանի խոճիթը, տեսավ Մարիամն այնտեղ չէ: Ո՞ւր է քույրդ, հորցրուց Սանդրոյից:

Նա գնաց, պատասխանեց պատանին:

Ո՞ւր գնաց աղջիկդ, դարձավ նա դեպի հիվանդը:

Նիկոլի ձայնի որոտմունքից ուշքի եկավ Քեթևանը և լսեց նրա խոսքերը: «Մարիամը մեռավ...», եղավ հիվանդի վերջին խոսքը...

Նիկոլը թուլացավ և գլորվեցավ գետին:

ԺԱ

Կառքը քանի մի ժամ հանդարտ կերպով գնում էր կոկած քարուղիի վրա: Մարիամը նրա զվարճությունով զմայլված՝ ամենևին չէր զգում ճանապարհի երկարությունը: Վերջապես նրանք հասան մի գեղեցիկ այգիի դռանը, որ գտնվում էր քաղաքից դուրս, մեծ գետի ափի մոտ: Կատոն ներս տարավ օրիորդին այգի և նրանք մտան մի փառավոր տուն, որ էր այգետիրոջ ամառանոցը: Այդ հոյակապ շինվածքի սենյակներից մինը միայն լուսավորված էր նույն պահուն, ուր պառավը ներս տարավ Մարիամին:

Պարոն Ք... միայնակ անցուդարձ էր անում սենյակի մեջ: Տեսնելով եկվորներին, նա մի կրիտիկական հայացք ձգեց օրիորդի երեսին. Ի՜նչ շատ ուշացար, Կատո, հարցրուց նա պառավից, և մոտենալով նրա ականջին ասաց. հազար թուման արժե...

Պառավն ընդունեց խիստ ինքնաբավական դեմք, որպես մի մարդ, որ գոհ էր յուր հաջողությամբ, ոչինչ չպատասխանեց, այն նրա խորամանկ երեսի վրա երևաց լի չարախնդությամբ մի դիվական ժպիտ:

Մարիամը, մի անկյունում կանգնած, լուռ և երկչոտ դեմքով նայում էր նրանց վրա, երբ պարոն Ք... գնաց նստեց կիսաթախտի վրա և հրավիրեց յուր մոտ օրիորդին:

Օրիորդի թշերն ամոթից կարմրել, վարդի գույն էին ստացել: Ե՛կ, մի ամաչիր, կանչում էր նրան պարոն Ք...

Գնա՛, մի ամաչիր, բոթում էր նրան Կատոն:

Օրիորդը մի քայլ անդամ չարեց;

Պարոն Ք... տեսնելով, որ նա չէր համարձակվում յուր մոտ գալ, մոտեցավ օրիորդին, բռնեց նրա ձեռից և տարավ կիսաթախտի վրա, ուր ինքն առաջ նստած էր:

Ի՜նչ լավ աղջիկ ես, ասաց նա շոյելով Մարիամի սիրուն մազերը և ավելի մոտենալով նրան:

Օրիորդը բոլոր մարմնով դողում էր:

Այժմ դու կարող ես գնալ, Կատո, ասաց պարոն Ք... պառավին:

Երբ Կատոն պատրաստվում էր դուրս գնալ, Մարիամը վազեց նրա մոտ, բռնեց պառավի փեշից, ասելով.

Չէ՛, դու մի՛ գնա:

Ես չեմ գնալու, Մարիամ, պատասխանեց պառավը նրան հանգստացնելով. ես գնում եմ մեկէլ օթախից քեզ համար միրգ բերեմ:

Չեմ ուզում միրգը, ինձ տա՜ր մեր տուն:

Հիմա ուշ է, ասաց նրան պարոն Ք... կրկին մոտենալով. էս գիշեր մնա՛ էստեղ, առավոտը Կատոն քեզ կտանե:

Չէ՛, չեմ կարա մնալ, մերս հիվանդ է, հիմա թո՛ղ տանե, ասում էր Մարիամը աչքերը լցված արտասուքով:

Դե՛ լավ, էստեղ սպասի՛ր, գնամ ֆայտոնը կանչեմ, որ քեզ տանե, ասաց Կատոն և դուրս վազեց:

Օրիորդն շտապեց նրան հետևել, դուռն արդեն կողպված էր դրսից...

Անցան մի քանի րոպեներ... դա՞ռն դրամատիկական րոպենե՞ր... Անցավ քառորդ ժամ:

Հանկարծ սենյակի լուսամուտներից մինը շառաչմամբ բացվեցավ և մի մարմին գլորվեցավ ներքև:

Չե՞մ ուզի... չե՞մ ուզի...», օդի մեջ լսելի եղավ մի ձայն և շուտով լռեց... Այդ խեղճ Մարիամի ձայնն էր: Մի քանի օրից հետո նույն այգիի կողքից հոսող մեծ գետի միջից ձկնորսը դուրս քաշեց մի սիրուն աղջկա մարմին: Բարի ձկնորսն առեց դիակը յուր ուսին, տանում էր դեպի յուր խրճիթը, որ պատանե ու թաղե նրան, երբ տեսավ աղքատների մի փոքրիկ խումբ բերում էին յուր առջև մի դագաղ:

Վա՜յ դեդի, վա՜յ դեդի, հառաչում էր մի պատանի յուր ձեռքերով քարշ ընկած դագաղի կողքից:

Սանդրո՛, հերի՛ք լաս, մխիթարում էր նրան Կեկելը:

Դա Քեթևանի դագաղն էր:

Նրանք տեսան դիակը ձկնորսի ուսին:

Մարիա՛մ... բոռաց Նիկոլը և գրկեց դիակը:

Ա՜խ, սիրեկան... ձայն տվեց Կեկելը և մարեցավ: